ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 4

2018թ մայիսի 29-ին տեղի ունեցավ ՀՀ Կոտայքի մարզի Գեղաշենի Ռազմիկ Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոցի 7-րդ «Ա» դասարանի ծնողական ժողովը: Ժողովին ներկա էին բոլոր ծնողները, դասղեկ Ն.Հովհաննիսյանը:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. 2-րդ կիսամյակի և տարեկան գնահատականների ամփոփում:
2. Ընթացիկ հարցեր, էքսկուրսիայի կազմակերպում:

1.Լսեցին. 2-րդ կիսամյակի և տարեկան գնահատականների հարցը:

Ելույթ ունեցավ դասղեկ Ն. Հովհաննիսյանը: Նա մեկ առ մեկ ծնողներին ներկայացրեց կիսամյակային գնահատականները՝ նշելով ,որ դասարանում կա մեկ գերազանցիկ , ինը հարվածային: Գերազանցիկը Դավթյան Թամարան է , հարվածայիններն են՝ Գալստյան Նարինե, Դավթյան Վարդիթեր,Եղիազարյան Տիգրան, Խաչատրյան Անի, Խաչատրյան Հակոբ, Հարությունյան Կատերինա, Հովակիմյան Վահե, Վարդանյան Անահիտ, Փանոսյան Վահե: Դասղեկը նշեց նաև , որ դասարանում չառաջադիմող և չգնահատված աշակերտներ չկան: Նելլի Հովհաննիսյանը խոսեց աշակերտների առաջադիմության մասին՝ հորդորելով ծնողներին լինել ավելի հետևողական , ավելի ուշադիր:

Որոշեցին.

Լինել ավելի հետևողական և ուշադիր, ամառային արձակուրդների ընթացքում հետևել, որ երեխաները կրկնեն անցած ուսումնական առարկան՝ գալիք ուսումնական տարում ավելի բարձր ցուցանիշ ապահովելու համար:

2. Լսեցին. Ընթացիկ հարցեր /կարգապահություն, վարք, էքսկուրսիայի կազմակերպում /:

Դասղեկը նշեց, որ երեխաները տարվա ընթացքում եղել են շատ աշխույժ, շարժուն, որի պատճառով հաճախ ունեցել են կարգապահական շեղումներ, որոնք շտկվել են դասղեկի հետևողական աշխատանքի շնորհիվ: Դասղեկը հորդորեց ծնողներին մեծ ուշադրությամբ հետևել իրենց երեխաների կարգապահությանն ու պահվածքին թե դպրոցում, թե փողոցում, թե էքսկուրսիայի ընթացքում:
Ծնողական խորհուրդն առաջարկեց էքսկուրսիա գնալ Խոր վիրապ:

Որոշեցին. Ծնողները խոստացան ամեն ինչ անել իրենց երեխաների առաջադիմությունը և կարգապահությունը բարձր մակարդակի վրա պահելու հարցում: Որոշեցին կազմակերպել էքսկուրսիա դեպի Խոր վիրապ: Հավաքել անհրաժեշտ գումար էքսկուրսիայի ընթացքում անհրաժեշտ տրանսպորտը և սնունդը ապահովելու համար:

Ծնողական խորհրդի նախագահ՝ /Տ.Աբրահամյան/
Քարտուղար՝ / Ի.Ասատրյան/